ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
«ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Հեռ. 010 51 59 40

«29» մայիս 2024թ. No 01/210

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«Սպասարկում» ՊՈԱԿ-ի և «Էլիքս» ՍՊ ընկերության միջև 28 օգոստոսի 2023 թվականին ԿԱՍՊ-ԳՀԾՁԲ-23/09 ծածկագրով Կառավարական 1 տան աշտարակային ժամացույցի վերանորոգման ծառայությունների պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում «Էլիքս» ՍՊ ընկերության կողմից մատուցված ծառայությունը թերի է:

Ժամացույցն ունի տեխնիկական և ծրագրային խնդիրներ:

Հարվածային մեխանիզմն ունի հետևյալ թերությունները.

Ձգող էլեկտրոնային մագնիսը այրվել է. ճոպանների զանգերին հարվածող մուրճի և էլեկտրոմագնիսի միջանկյալ դետալները և ճոպանները պոկվել են: Էլեկտրական մագնիսի և մուրճի միջև կապող դետալները չեն համապատասխանում և շարքից դուրս են եկել: Ամենօրյա ռեժիմով նկատվում է ծրագրից շեղումներ: Գրանցվում է գիշեր և ցերեկ սլաքների շեղված տեղաշարժ, դիտվում է թվատախտակի և բուն ժամացույցի անհամապատասխան աշխատանք: Տեղադրված ծրագիրը խափանումներով է աշխատում:

Այս խնդիրների մասին բազմիցս ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանումը և՛ բանավոր. և գրավոր տեղեկացրել է «Էլիքս» ՍՊ ընկերությանը. բայց այդպես էլ չեն լուծվել ժամացույցի տեխնիկական և ծրագրային խնդիրները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պետք է ասել, որ «Էլիքս» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրի 3.5 կետը, այն է՝ ծառայության մեջ ընդգրկված ապրանքների ցանկում, եթե կան Հիմնական միջոց հանդիսացող ապրանքներ, դրանց համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված՝ 1800 (հազար ութ հարյուր) օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

«Սպասարկում» ՊՈԱԿ ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» պարբերությամբ որոշում եմ «Էլիքս» ՍՊ ընկերությունը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներ ցուցակում, և «Էլիքս» ՍՊ ընկերության կողմից տրված տուժանքի մասին համաձագրերը ներկայացնել «Էլիքս» ՍՊ ընկերությանը սպասարկող ֆինանսական կազմակերպություն:

Հարգանքով՝

Տնօրեն Տ. Պետրոսյան